ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 135 -Ա

ք.Արտաշատ

„13„ մայիս 2025թ.

ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՅԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏԱՇԵՆԻ Վ. ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի մոտ 2025 թվականի մայիսի 13-ին Հայկուհի Հայկի Սահակյանի հետ անցկացրած հարցազրույցը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայկուհի Հայկի Սահակյանին 2025 թվականի մայիսի 14-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման–ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

13.05.2025

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս.ԹԵՎՈՆՅԱՆ